ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

23.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/30

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2019թ. թիվ 27/26-1/6681-2019 գրությամբ «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 15.04.2019թ. թիվ 04/5949-19 գրության հիման, վրա 22.04.2019թ. թիվ 27/26-1/6681-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **«Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ՆԳ-2019/30 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/30 ընթացակարգի շրջանակներում 29.04.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.04.2019թ. թիվ 04/5949-19 գրությամբ հայտնել է, որ նախարարության կողմից 2019 թվականի մարտի 13-ին կազմակերպված համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների գնման գործընթացի արդյունքում ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից է հայտարարվել «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն, որին անգործության ժամկետը լրանալուց հետո, գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2019 թվականի մարտի 28-ին տրամադրվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը: Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով, որ 11.04.2019թ լրացել է ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը /28.03.2019թ-11.04.2019թ/, սակայն Ընկերության կողմից նշված փաստաթղթերը չեն ներկայացվել, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն զրկվել է նշված պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացնում է «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ի տվյալները և համապատասխան հիմքերը գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Միաժամանակ տեղեկացնելով, որ 2019 թվականի մարտի 22-ից «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն արդեն իսկ ընդգրկվել է *գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք*

չունեցող մասնակիցների ցուցակում: Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը 15.04.2019թ. /ստորագրված պայմանագիրը և համապատասխան պայմանագրի կատարման ապահովումը ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո/ նոր միայն ARMEPS համակարգով, մերժել է պայմանագրի շնորհումը՝ պատճառաբանելով, որ կազմակերպությունը գտնվում է վերը նշված ցուցակում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/30 ընթացակարգի շրջանակներում 29.04.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/30 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի 9.1 ենթակետով կայացված որոշմամբ «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. Ընտրված մասնակցին Պատվիրատուն 28.03.2019թ. էլեկտրոնային եղանակով ուղարկել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից մինչ օրս չի ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, այն դեպքում երբ պայմանագրի նախագիծն ու պայմանագիր կնքելու մասին ծանուցումը վերջինիս տրամադրվել է 28.03.2019թ.: Պատվիրատուն արձանագրել է, որ

հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագելու իրավունքից:

5. Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն 15.04.2019թ. armeps.am համակարգով, մերժել է պայմանագրի շնորհումը՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.04.2019թ. թիվ 27/26-1/6681-2019 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 15.04.2019թ. թիվ 04/5949-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

<u>բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,</u>

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ և 14-րդ ենթակետերի համաձայն՝

13) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

14) ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 9-րդ կետի 9.1 ենթակետով կայացված որոշմամբ «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն 28.03.2019թ. «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 12.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից մինչ օրս չի ներկայացվել իր կողմից ստորագրված պայմանագիրը և պայմանագրի ապահովումը, այն դեպքում երբ պայմանագրի նախագիծն ու պայմանագիր կնքելու մասին ծանուցումը վերջինիս տրամադրվել է 28.03.2019թ.: Պատվիրատուն արձանագրել է, որ հիմք ընդունելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, Ընկերությունը զրկվում է պայմանագիրը ստորագելու իրավունքից:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

Ընդ որում ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

Նույն կետի 8.6 ենթակետով նախատեսվել է, որ ***Պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:***

Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն 15.04.2019թ. armeps.am համակարգով, մերժել է պայմանագրի շնորհումը՝ պատճառաբանելով, որ Ընկերությունը գտնվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ գտնում եմ, որ «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ն, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չստորագրելով պայմանագիրը և 15.04.2019թ. armeps.am համակարգով մերժելով պայմանագիր կնքելու առաջարկը, այսինքն՝ հրաժարվելով «ՀՀԿԳՆԳՀԾՁԲ-19/1» ծածկագրով պայմանագիրը կնքելուց, թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.04.2019թ. թիվ 27/26-1/6681-2019 գրությամբ «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Սերվիս Պլյուս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**